ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հուլիսի 2013 թվականի № 17-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆՄԱՍԻՆ» № 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի № 661-Ն որոշման պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի «Համայնքի 2013 թվականի բյուջեի հաստատման մասին» № 41-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները և լրացումները:

1.Վարչական բյուջեի եկամտային մասն ավելացնել 455.0 հազար դրամով, ծախսային մասն ավելացնել 455.0 հազար դրամով:

2. Ծախսային մասում 455.0 հազար դրամից՝

1) 184.0 հազար դրամն ուղղել «օրենսդիր և գործադիր մարմիներ, պետական կառավարում» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածին,

2) 76.0 հազար դրամն ուղղել «գրադարաններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08.2.1 ծրագրի «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածին,

3) 40.0 հազար դրամն ուղղել «մշակույթի տներ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08.2.3 ծրագրի «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածին,

4) 155.0 հազար դրամն ուղղել «նախադպրոցական կրթություն» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09.1.1 ծրագրի «սուբվենցիա ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածին:

Կողմ(5), դեմ(0), ձեռնպահ(0):

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՇԱՀԳԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ